111. ԹԱՔԱՎՐԵՐՆ ՈՒ ԻՐԱՆ ՊՈՒՃՈՒՐ ՏՂԵՆ

Ըլըմ ա լըմ չի, մի թաքավրեր ա ըլըմ։ Էս թաքավրերը ունեՆըմ ա իրեք տղա։ Օրերի մի օր էս թաքավրերը քյնըմ ա ֆրերսի, մըհել տըննըմ ա մի տըեղ մեծ կրակ են արել, մեչտեղը մի օց հաքվի վրա՝ կաղնած ծղրտըմ ա։ Էս թաքավրերը ասըմ ա. «Ի՞նչ անեմ, թե կրակը ետ տամ, ինքը կարալ չի տուս կյա՝, տափը շատ կեծացած կլի»։

Մհել մտածըմ ա, մտածըմ, քյնըմ ա մի լատան ա կտրըմ, խուրջինը կաղըմ տանիցը ու կախ անըմ ըտի, օցը ծրեռաց պլստալա ընդյնըմ ա խուրջինը, սա՝ քաշըմ ա տուս պիրըմ, տընըմ էն ղուլեն։ Օցը տուս ա կյալի ու տրա՝ հետ խոսըմ ա, ասըմ ա. «Ես օցերի թարավրերի տղեն եմ, քյնանք մեր տուն, իմ հորը կասեմ, վրեր տու ինձ մահից փրկեցիր՝ քեզ շատ նվերնի կտա»։

Սա՝ ասըմ ա. «Ես էլ եմ թաքավրեր. ինձ մի պա՝ն էլ ա պըետկը չի, մրենակ հետաքրքիր ա քու հորն ու մորը տրեենամ»։

Սրհանք իրար հետ քյնըմ են։ Վրեր իրանց սահմանին մոտանըմ են, օցը էս թաքավրերին ասըմ ա. «Մի մեծ պլոլիկ ջիջ քաշի»։ Ջիջ ա քաշըմ. ասըմ ա. «Մի պուճուրն էլ տրա՝ միչին քաշի»։ Էտ էլ ա քաշըմ։

Ասըմ ա. «Դե էտ պուճուր ջրջմը կաղնի ու իմ բողազիցը փրոնի, հուփ տու. ես պինդ ծղրտալ դեմ, ըշխարքիս տակին ինչքան օցեր ու վիշապնի կան՝ կյա՝լ դեն ըստի, տու՝ վախես վրեչ, նհանք էս ջիջը անց չդեն կենալ, չմնու՝ վերչմը իմ հերն ու մրերը

դեն կյա՛լ։ Վրեր կյա՛ն, ընդիյան դենը ես կասեմ նրա՛ն, թե քեզ ինչ անի»։

Էտ թաքավրերը մի մեծ ջիջ ա քաշըմ, մի պուճուրն էլ տրա՛ միչին ու էն պուճուր ջըջմը կադնըմ ա, էտ օցի բդիցը հուսի ա տալի, մըհել տրենըմ ա ըշխարիս տակին ինչքան օցեր ու հրամքեր կա՝ եկան, տհանց չորս ղոլեն թուսի ըլան։ Տա՛ վրեր մըտիկ ա անըմ տհանց, վախիցը ղա՛րղանդվըմ ա, համա վրեր տենըմ ա մինն էլ ա ջջին մոտ չի կյա՛լի, սիրտըպնդըմ ա։ Տըենըմ ա, հրես էրկու հեյվարա սուրուն օցեր մի տասնըհինգ-քսան օցերի միչի շրջապատված կյա՛լիս են։ Ասըմ ա. «Ա՜յ, էն իմ հերն-մերն են»։ Տհանք կյա՛լիս են, մոտանըմ թը չէ, էս օցը հորնմորը ասըմ ա. «Հայրիկ ջա՜ն, էս մարթը իմ կյանքը փրկել ա, տուք սրան պըետկ ա իմ ա՛րժեքովը վրեսկի տաք»։

Թաքավրերը ասըմ ա. «Բալա ջա՜ն, վրեր ծնողը կարա իրան վրերթուն կյին տընի, վրերթին ամեն պանիցը թանդ ա, անկյին ա»։ Էտ թաքավրերին ասըմ ա. «Տու՛ ի՞նչ վրերթի ունես»։ Ասըմ ա. «Իրեք տղա»։ Ասըմ ա. «Դե՛, վրեր տրհե ա, խոսկ եմ տալի իմ ախչիկը տամ քու տղերանցը մինն ու մընին, վրեր մենք հավիտյան պարեկամնի ըլենք, համաձա՞յն ես, թե՞ չէ»։ Էտ թաքավրերը էլ կարըմ չի «չէ՛» ասի, ասըմ ա. «հա՛»։

Սա՛ մի օց ա տընըմ էտ թաքավրերի հետ, ասըմ ա. «Կտանես ծրեր տուն, տղերանցտ կասես, վրերը կհամաձայնվի իմ ըխչըկանը առնի, թող էս օցի հետ կյա՛, իմ ըխչկանը տրենա. թե կհրվանի, թող առնի, հրվանիլ չի, էտ էլ ինքն ա գլիդըմ»։

Թաքավրերը, օցն էլ հետը, կյա՛լիս ա իրան տուն։ Տղերանցը հվաքըմ, ասըմ ա. «Ա՜յ բալենի, սհե-սհե պա՛ն ա ըլել, հմի ծրեղանից վրե՞ը կըքյնա՛ էտ ըխչկանը տրենա»։ Վրեչ մեծն ա ծրեն հանըմ, վրե՛չ էլ միչնակը։

Պուճուր տղեն ասըմ ա. «Հա՛յրիկ, վրեր տու՛ համաձայնվել ես, ես էլ եմ համաձայն, ես կըքյնա՛մ»։

Պուճուր տղեն էտ օցի հետ կյա՛լիս ա տհանց աշխարը։ Սըհանք էնքան կյա՛լիս են, էնքան դիյեր-դվեր են անըմ, վրեր էլ ասիլու չի։ Էս տղեն մի՜ բըղա՛ըրըմ ա, մի՜ բըզա՛ըրըմ ա, վրեր անըմը տալու չի։ Սըհանք անջախ-անջախ ըրգլնադեմ հասնըմ են էտ թաքավրերի տուն։

Թաքավրերը ասըմ ա. «Քյնա՛ էն օթախըմը նստի, էս ա իմ ախչիկը կըկյա՛»։ Տղեն քյնըմ ա, նստըմ, ճամփա տահըմ, ճամփա պահըմ, ախչիկը եգանըմ ա։ Սրա՛ քունն էլ տանըմ ա ու քնըմ ա։

Ախչիկը կյալիս ա, տրենում ա տղեն քնած ա, էրկու կոճի ա քցում տրա ֆիրը ու բրախում, քյնում, մթամ թե՝ քու ի՞նչ պանն ա կնիկ առնիլը, առ էս կոճենին քյնա կոճի տու։ Տղեն վրեր ա կենում. տրենում ա օքմի չիկա, կյալիս ա թաքավրերին ասում ա. «Բա ո՞ւր ա քու ախչիկը, խի՞ չի էկավ»։ Ասում ա. «Եկավ էլ, քնաց էլ, վրեր տու քնած իր, ես ի՞նչ անեմ»։ Տղեն ասում ա. «Քնած չեմ ըլել»։ Ասում ա. «Դե՛, ջրերտ ակը տու»։ Ջրերը ակն ա տալի. տրենում ա՝ Երկու կոճի կա ջրումը։

Էտ տղեն էքսի քշերն էլ ա նստում, ճամփա ա պահում, ախչիկը ըլեա ղաստի եղանում ա։ Տղեն ըլետ քնովն ա ըլում ու քնում։

Ախչիկը վրեր կյալիս ա տրենում ա՝ տղեն քնած ա, էրկու պոպոք ա անում արա բալշի տակին ու քյնում ա. մթամ թե՝ տու քյնա մաճուկի տու, քու ինչ պանն ա կնիկը։

Տղեն բռավոտը վրեր ա կենում, տենում օքմի չիկա։ Ըլետ կյալիս ա թաքավրերի կուշտը։ Թաքավրերը ասում ա. «Եկե՛ ա, քյացել, քյնա բալշիտ տակը ակը տու»։

Կյալիս ա, տրենում էրկու պոպոք, ասում ա. «Թաքավրեր, սրանով ի՞նչ ա ուղել ասի»։ Ասում ա. «Ասել ա՝ տու քյնա մաճուկի տու, քու ի՞նչ պանն ա կնիկը»։

Էտ թաքավրերի մեղքն էլ ա տալի իրան ըխչկա արած հանաքնին, ասում ա. «Տղա՛, ըսօր վերջի օրն ա, էս մահետն էլ դի կյալ։ Վրեր քնած ըլար՝ արթեն հնչ, քյնա ծրեր տուն»։ Տղեն կյալիս ա. նրստում, ասում ա. «Վրեր ինչ ուղում ա ըլի, ըսօր քնի։ չղեմ»։

Սա. ճամփա ա պահում, ճամփա, ըլետ քունը տանում ա։ Վրեր աբենում ա էլ ճար չիկա, մատը կտրում ա ու վրեն աղ ա անում։ Ըսկսում ա մոմոալը, վրեր էլ քունը տանի վրեչ։ Տղեն մըհել տրենում ա, հրես տուռը պաց ըլավ, մը լավ քու ասած սուրուն, էնքան սուրուն, վրեր էլ ասիլու չի, օց էկավ, մոտացավ, ղիյերեց ստոլին, ուռավ, ուռավ, մեծացավ ու տրաքեց, միչիցը մի էն ղայդի սուրուն ախչիկ տուս էկավ, վրեր վրե՛չ ուտես, վրե՛չ խրմես՝ տրան մտիկ անես։ Տղեն տրան տրհե տրենում ա թե չէ. ծրեսուց սիրահարվում ա ու ուշկը քյնում ա։ Ախչիկը իրան օցի խորխը քսում ա տրա իրեսին, սա ուշկի ա կյալի ու նստում։ Սհանք իրար հետ ղրից են անում, ասում-խոսում ու էրկուսն էլ իրար վրա սիրահարվում են, իրար հվանում։ Ըռավրեսը իրար հետ կյալիս են թաքավրերի կուշտը, ասում են. «Մենք իրար հրվանել ենք»։

Թաքավրերը ասում ա. «Մրեր օրենքումը էրկու հրսանիք են

անում։ Ես ըստի ծրեզ հրսանիք կանեմ, կփսակեմ, ճրմփու կըտանեմ. ընդի էլ քու հերն ա գյիդում, ինչ կանի կանի»։ Պիրում ա օխտը օր, օխտը քշեր տրհանց հրսանիք անում, փսակում, ուտում, խմում, քյեփ են անում։

Մի քանի օր եդը տղեն ասում ա. «Դե՛, քյնանք մեր տուն»։ Ախչիկը ասում ա. «Վրեր իմ հերը կասի՝ ի՞նչ ես ուզում, տու կասես՝ մի զատ էլ ա ուզում չեմ, մրենակ Սև ծին եմ ուզում»։ Կյալիս են թաքավրերին ասում. «Մրենք քյնում ենք»։ Ասում ա. «Ի՞նչ ես ուզում»։ Ասում ա. «Մի զատ էլ ա ուզում չեմ, մենակ Սև ծին եմ ուզում»։

Սա՝ Սև ծիյուն նստում ա, օցը խտտին, կյալիս ա իրանց տուն։

Հերը մի պալատ ա տալի տհանց։ Սհանք իրար հետ ապրում են։ Մի օքմի էլ ա սհանց տուռը պաց չի անում, սհանց տուն չի կյալի։ Մի օր թաքուհին ասում ա. «Մի քյնամ տղիս տուն, տրենամ վրե՞նց են ապրում»։

Կյալիս ա տուն, թե չէ, էս օցը վեր ա կյալի, քյնում ա տրա աղաքը, հաքվով տրա փեշերի թոզը տրփում ա, աղաքն ա ընգյնում, պիրում աթոռի կողքը, հրսկցնում ա, վրեր նստի։

Թաքուհին մտիկ ա անում, տրենում ա սրա տունը հենց մաքուր հվաքած ա, վրեր էլ ասիլու չի, ամեն պանը դասավորված, տրած ա իրան տեղը։ Մի պան մի տրեղ ավել չի, ամեն ինչը սարքին-կարքին իրան տրեղումն ա։ Մի էն ղայդի ճաշ ա էփել, վրեր էլ ասիլու չի, ֆրետիցը մարթ մրխթարվում ա։ Էս օցը տրան հսկցնում ա, վրեր ճաշ ածի ուտի։ Սա ճաշ ա ածում, ուտում։ Էնքան հվանում ա, վրեր մհել ա ածում, ուտում։ Ըրուգյունը կյալիս ա տուն, թաքավրերին ասում ա. «Ա՛ մարթ, էս հարսը մեկել հարսներիցը լավն ա. մաքուր, շնորով, հարդող, պատվող, համա, վրեր օց ա, ի՞նչ անենք»։

Օրերի մի օր մարթը կնգյանը ասում ա. «Ա՛ կնիկ, պատրաստութին տես, քառասուն հոքի դեն կյալ մեր տուն»։

Սա ծրեռաց տրեսակ-տրեսակ ճաշեր ա էփում, սեղանը սարքում, ամեն ինչը պատրաստում, իրան չանգյալ-տանակով, իրան քթալով, ճաշերը լրցնում։ Ինքը թախտին կուտապ-կուտապ կյալի թե չէ, տրենում ա հրես էկան ղոնաղնին։

Սհանք, վրեր տուն են մտնում, ամեն պան տրհե շենքին, շնորին տենում են, մնում են զարմացած, թե էս տանը էս ինչ տրեսակ մաքրասեր, տնարար կնիկ կա։ Սհանք. վրեր նստում են, սկսում են ուտիլ խմիլը, մինը էն ղոլիցը ասում ա. «Ես հլա էս

տըևսակ համով նա̈շ մի տըեղ էլ ա կերած չի»։ Մեկելնին էլ ասըմ են. «Դո̈ւզն ասած, մընք էլ ուզինք էտ ասենք»։

Կեր ու խումից եդը, վըեր տո̈ւս են կյա̈լի, ճամփին մինը ասըմ ա. «Ամեն պա̈ն լա̈վ էր, համա ի՞նչ օքուտ, վըեր կնիկը օց էր. ես ըսկի նրա̈ն տանս միչին չեմ թողնի մի քշեր մնա»։

Տղեն էս խոսկերը մա̈նըմ ա, սրտին դա̈րդ ա ըլըմ։ Մի օր կնղյա̈նր ասըմ ա. «Կնի՛կ ջան, շատ եմ խնթըրըմ, արի՛ ըսօր իրար կուոր ընդյա̈ծ քյնա̈նք ժամը, կյանք»։

Կնիկը ասըմ ա. «Մարթ ջան, կըկյամ, համա լա̈վ չի, կլխտ փորցանք կըկյա̈։ Հլա̈ վախտը չի, մի տարի դմա̈ցել ես, էրկուսն էլ պըմա̈ցի. ես քեզ ասել եմ, վըեր իրեք տարին թմամի թե չէ՝ արթնն ես էս խորխիցը տո̈ւս դեմ կյա̈լ ու վերչ կլի իմ օց տա̈ռնա̈լունս»։

Տղեն վըեր շատ խնթըրըմ ա, կնիկը էլ խաթրիցը ըլըմ չի։ Մի դյրա̈ղչի սհա̈նք իրար կուռը ընդյա̈ծ քյնըմ են ժամը։ Ով տենըմ ա, սյերանը ղա̈ղ ա մնըմ. ըրմանըմ ա, թե էս տեսակ սո̈ւրո̈ւն կնիկը սա̈ էս վրերղիյան ա պիրել։

Տղի հերն էլ ա տըենըմ, սրա̈ սիրտն էլ ա տակն ու վրա̈ ընըմ. աչկը ընդյնըմ ա էտ ըխչկա վրա̈, համա դե իրան հարսն ա, ինչ կարա անի. հու կարալ չի ասի՝ տո̈ւ բըրախի, ես եմ առնըմ։ Իրան միչին ասըմ ա. «Ա՜խ, թե դյդա̈ցել ի էն թաքավըերը տըհև սո̈ւրո̈ւն ախչիկ ունի, ես էլ խի՞ կըկյի կասի. «Ո՞վ ա ուզըմ»։ Էն ա ես կուղի ու ինձ մհտր կպիրի էլի»։ Սա̈ քշեր-ցերեկ մտածըմ ա, էլ կարըմ չի մտըհան անի, ասըմ ա. «Հենց պա̈նի տղիս ղրդյեմ. վըեր քյնա̈, էլ ետ չի կյա̈»։

Մի ըո̈ւղյո̈ւ տղին կանչըմ ա իրան կուշտը ասըմ ա. «Ա՛ բալա, րա ես ծըեղ հլա̈ հըսանիք չեմ արել, տո̈ւ էլ պա̈ն չես ասըմ. ուրոշել եմ, վըեր մը լա̈վ մեծ հըսանիք անեմ ու ծըեզ փսակեմ Տրա̈ մհար ես պըետք ա քառասուն պետութենից մարթ կանչեմ, տո̈ւ պըետք ա քյնա̈ս քառասուն դևերի քառասուն ընգնանի պղինձը պիրես, վըեր ճա̈շը հերիքի»։

Տղեն կյա̈լիս ա, կընդյա̈նը պատմըմ ա, ասըմ ա. «Հերս կանչեց, սհև-սհե պա̈ն ասեց»։ Ասըմ ա. «Բա՛, ես քեզ ասըեցի՞ վըեչ. կլխտ փորցանք կըկյա̈։ Կըքյնա̈ս Սև ծիյու կուշտը, նրա̈ն կասիս, նա̈ քեզ կըսվըրցնի»։

Կյա̈լիս ա Սև ծիյու կուշտը, Սև ծիյուն պատմըմ ա։

Ծին ասըմ ա. «Քշերս օխտը փութ չա̈միչ, օխտը փութ խուրմա կածես աղաքս, տո̈ւ կըքյնա̈ս կըքնես։ Վըոցըկըկանչին կըկյա̈ս, ինձ կթամքես, նի կլես ու մի պինդ պլետ կտաս, ես ծըե-

ռաց թռչիլ դեմ օխտը սարի քամակը. քառասուն ընդնանի պղինձը ըտի ա, քառասուն դևերը ըտի են ապրըմ։ Սհանք քառասուն ախպեր են։ Կըքյնաս, կտեսնաս օխտը կյոմոզ են կտորել, տրել կրակին ղըլթղըլթալա էփըմ ա։ Բարև կտաս ու կասես. «Էկել եմ ծրեր պղինձը տանեմ, ճաշ եփենք»։ Նհանք քեզ հետ լալաղ չեն անիլ խոսան, հլե նհե ասիլ դեն՝ տար։ Տու վախես վրեչ, քանի իմ մեչկին ես, իմ ուժն էլ ա քեզ վրա, անցկրկենաս էն ղոլը, իրեսըտ կըթեքես մըեր եկած ճըմփի վրա, ծրեռտ կըքրցես պղնձի ընգընիցը, ու ինձ մի պինդ պըլետով կտաս։

Տղեն սհենց էլ անըմ ա ու պղինձը պիրըմ ա տընըմ հոր տունը։ Հերը, վրեր տրենըմ ա, մընըմ ա ըրմացած, թե էս տղեն մրենակ վրենց ա պիրել։ Էքսը տղին կանչըմ ա, ասըմ ա. «Պրետկ ա քյնաս ասլանի կաթը պիրես»։

Սա ըլետ կյալիս ա ու կընգյանը պատմըմ։ Կնիկը ասըմ ա. «Ծիտ կըքշես, կըքյնաս էս ինչ սարը, կըտեսնաս ընդի մի ասլան պրանված, կյոռըմ ա. թաթը քարխեց ա ըլել, ժահրը միչին ուռել ա, ցավիցը կարըմ չի, ժաժ կյա։ Կըմոտանաս, քմակիցը կամաց թրով կտաս, էտ ուռուցքը պտառվիլ դի ու ժահրը միչիցը վե դի տանանալ, ցավը կտրիլ գի։ Կասի. «Տղա՛, ցավս բուժեցիր, ասա՛, ո՞վ ես, ի՞նչ ես ուզըմ, ասա՛ լավութինիտ տեղը ի՞նչ տամ»։ Կասես. «Քու կաթնիցն եմ ուզըմ, ուրուշ ղատ չեմ ուզըմ»։

Տղեն կյալիս ա, հասնըմ ըտի, տրհենց էլ անըմ ա։ Ասլանը ասըմ ա. «Տղա՛, ի՞նչ ես ուզըմ, ուզի տամ»։ Ասըմ ա. «Քու կաթնիցն եմ ուզըմ»։

Ասըմ ա. «Պա՞հ, քու տունը չի քանդվի, ախր գյիդըմ ես, վրեր իմ կաթը մի պանի միչի էլ ա կենըմ չի, մենակ իմ ճուտի մորթու միչին ա կենըմ։ Համա ի՞նչ արած, տու ինձ լավութին ես արել, խոստացել եմ ուզածտ տամ՝ պետկ ա խոսկիս տերը ըլեմ. եթե առաչուց գյըդացելի ուզածրդ, համաձայն չի ըլիլ, թող էս մի ճուտն էլ քեզ ղուրբան ըլի։ Կըքյնաս էն քարի տակիցը ճուտիս մինը կտանես հեռու կմորթես, վրեր վրե՛չ աչկրս տենա, վրե՛չ էլ անգաճս ծենը մանա։ Կրպիրես հենց կրկրթես, վրեր տրենամ վրեչ ու վրեկունես, կրքյնաս։ Էն մի ճուտն էլ հետրտ վրեկունես, վրեր աչկս կենդ տրենա վրեչ, սիրտս մոմռա»։ Սա սհենց էլ անըմ ա ու կաթը պիրըմ տուն։

Հերը, վրեր տրենըմ ա տղեն էս մհետն էլ էկավ, ասըմ ա. «Տրեր աստած, սրան վրերգի ղրգյեմ, վրեր քյնա՝ էլ ետ չի կյա»։

էրսի օրը տղին կանչըմ ա ասըմ ա. «Պըետք ա քյնաս անմահական ճուր պիրիս»։

Տղեն կյա՛լիս ա ծիյու կուշտը, լա՛ց ա ըլըմ։ Ասըմ ա. «Խի՞ ես լա՛ց ըլըմ»։ Ասըմ ա. «Բա՛, սհե-սհե պա՛ն ա ուզըմ»։ Ասըմ ա. «Մտածի՛լ մի, աստոծ ղորմած ա, քյնա՛, պի կերը լըցրու աղաքս, տու էլ հաց կե ու քնի, ղինջացի։ Վըեռցակը կանչիլիս կըկյա՛ս կընստես ու կըքշես, օխտը սարի քամակը անցկըկենաս, կըքյնա՛ս, հասնես Սև սարը, կըտենաս մի ղոչ՝ ղաքին տմա՛կ տրա՛ծ. կողքին մի կյիլ՝ ղարին խոտ տրա՛ծ։ Ղոչի ղաքի տմա՛կը կտնես կյիլի ղարին, կյիլի ղարի խոտը կտնես ղոչի ղաքին։ Մխելի էլ կըքյնա՛ս, կտենաս մի ճուր՝ ժահրն ու արին ա, մի պո՛ւռը վըե կունես պըռնըմըտ, աա՛ռնա՛լ ղի պարղ ղուլալ ճուր, կխմես, կասես. «Խվա՛յ. էս ի՞նչ ղուլալ, բողցրը ճուր ա»։ Մխելի էլ կըքյնա՛ս, կտենաս մի փակ տուռ, մի պա՛ց տուռը. փակը պա՛ց կանես, պա՛ցը՝ կփակես։ Էտ թա՛ղա պա՛ց արած տանովը կմըտնես վարթ բաղչեն, ըտի հաղա՛ր ու մի արևսակ ծաղկընի կա, մնին էլ ա ծըեռը չի տաս, կըքյնա՛ս ամենա վիրի վա՛րթքու տակը՝ անմահական ա՛խպուրը ընղի ա, կլցնես ու կըկյա՛ս։ Ըղնետ ղի ղեն տալ. «Անմահական ճուրը տարա՛ն, տարա՛ն, փռնեցե՛ք, փռնեցե՛ք»։ Մընիցն էլ ա վախես վրեչ, վըե՛չ քեզ փռնող կլի, վըե՛չ էլ ետ մտիկ արա։ Ետ մտիկ անես թըշէ, ես էլ, տու էլ քար կտա՛ռնանք»։

Էս տղեն ահենց էլ անըմ ա ու անմահական ճուրն էլ ա՛ պիրըմ տուն։ Կնիկը ասըմ ա. «Ա՛ մարթ, ճուրը տանիլ մի, հիլա ըստի կենա, քու հերը արթեն պատրաստվել ա քու ղեմ կռվի ղի տուս կյա՛լ»։

Տղեն ծին քշըմ ա ու քյնըմ։ Տենըմ ա՝ էն ճամփեն՝ վըեր ենքը քյա՛ցել ա անմահական ճրի, ղոռքը կտրել ա, սպասըմ ա։ Գյիղըմ են, թե ղենը ղի ետ կյա՛լ։

Սա՛ թուրը քաշըմ ա ու ընղյնըմ տհա՛նց մեջը, ըսկըսըմ փըթթիլը։ Թե ինչքան ա էտ կռիվը քաշըմ, ինքն էլ չի ղյիղըմ, մըենակ էն ա արենըմ, վըեր հրես մինն էլ իրան ղիմացիցն ա խեխտիլով կյա՛լի։ Մոտանըմ ա, տըենըմ ա, էս էլ էն ասլանի ճուտն ա։

Սհա՛նք էտ օրը չքել ճա՛շը տհա՛նց ախտըմ են, կյալի տուն. արենըմ ա կընիկը արթեն խորխիցը տուս ա եկել, հաքել, կապել, ղըթա՛րվել։ Ասըմ ա. «Մարթ ջա՛ն, ըսօր վերջին օրն էր, իրեք տարին թմամեց, էլ ես օց չեմ տա՛ռնալ»։

Սհա՛նք նորից ուտըմ, խմըմ, քյեփ են անըմ։ Պիրըմ են էս արղին անըմ են թաքավըեր, կնիկն էլ տա՛ռնըմ ա թաքուհի։

Իրանք հասնըմ են իրանց մուրաղին տո՛ւք էլ հասնեք ձեր մուրաղին։